



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅՆԵ · 1863 — ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՓԵՏՐՈՒԱՐ

27 ՅՈՒՆՈՒԱՐ

ԽՕՍՆԱԿՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՆԱՊԱՏՍ ՀԱՅՈՅ

**Պայծառ հողի, զօրաւոր միավ, եռանդուն սիրոտ, անվեհեր կամք, քաջարան լեզու . — այսպիսի էր խօսնակն եկեղեցւոյ, գերագոյն խօսնակն : Եւ իր ամենէն սրտանց ըսածն, իր առաջին և վերջին մրմունչն, իր երգոց երգն էր, « Փառք քեզ, Աստուշան, յաղագս ամենայնի » : — Ասորոց դաշտաց մէջ բացուեցաւ . Յունաց կայսերական մայրաքաղաքին մէջ՝ ի վերայ երկթերթի շըրթանց վոսփորիոնի՝ ընդարձակեցաւ . ի հովիտս և յանապատս Հայոց ամիսովեցաւ, բիւրաբարբառն այն ՈՍԿԻ-ԲԵՐԱՆ : Եւ յետ այնքան անթիւ անդամ կըրկնելու զնոյն ձայն, զնոյն երգ, անդամ մ'այլ հնչեց սրտառուչ, և լռեց : . . . Լռեց « Հոչակաւոր բարբառն՝ որ ել ընդ » ամենայն աշխարհս : . . . Քաջաձայն « նուազն եկեղեցւոյ՝ որ յորդորեաց ըդ՝ » մանկունս նոր Սիոնի յօրհնութիւն**

» աստուածութեան . գործարան քնարն « Հոգւոյն սրբոյ, որ 'ի սաղմոսելն իւ » բում հալածեաց զեղեռնն դիւաց : » Ցամնաղի միաւորեալք զգայարանք « շնչոյ և մարմնոյ, որ միացեալ միաւու » բեցաւ սիրով 'ի յերգս երկնաւոր թաւ » գաւորին : Անթուլանալի լարապետն « գեալն միաձայնութեամբ՝ որ հարսնաւ » ցոյց զեկեղեցի 'ի միաւորութիւն սուրբ « Փեսային : . . . Գործասէր և քաղցրաւ » գործ մեղուն, որ 'ի խորսխէ աշխաւ » տութեան իւրոյ՝ քաղցրացոյց զեկեցի « զեցի սուրբ : . . . Գերագոյնն և գերաւ » հրաշ միտքն, որ զանհասանելի իմաստ » տութիւնս հին և նոր կտակարանաց՝ » յինքն ամբարեաց : . . . Նմանակիցն և » անուանակիցն պատուականութեանն » ոսկւոյ, որ զամենեսեան հարստացոյց » 'իփարթամութիւնս անապական գանձն : . . . Մեծն այն և ոսկէղարդ լե-

» զու . . . (որ) ձգեաց տարածեաց ըզ-  
» բան վարդապետութեան իւրոյ ընդ  
» ամենայն երկիր՝ իբրև զմանանեխ՝ զա-  
» ռակեալն՝ ի Տեառնէ, և եղե հանգիստ  
» և հովանի ամենայն իմաստնոց՝ վերա-  
» ցելոց թռուցելոցն յերկրէ։ Մի բար-  
» բառ շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ վարդա-  
» պետութեան լեզուի նորա։ » և այլն։

Այսպէս՝ ի գովեստ տիեզերալուրիօնու-  
նակին նուազէր իր թեսոց տակ մեծցած  
և յետոյ իր բեմին վրայ թառած՝ սանա-  
կանն Պրոկլոս։ Իբրև ձայն Աստուծոյ՝  
ձայնն ժողովրդեան՝ մեծի և փոքրու, հե-  
ռաւարի և մերձաւորի՝ նաև անոր կեն-  
դանութեան առեն սեփականեց իրեն  
զկոչումն ըսկիրերան. արժանաւո՞ր պա-  
տիւ. որ և 15 դարերէ կրկնուելով, ոչ  
թռուցաւ, ոչ տկարացաւ, այլ և ինչ-  
պէս քան զնախորդս իւր գերազանց  
սեպուէր նա, այսպէս և ՚ի յետնոց ան-  
հաւասարելի մնալովն, այլ աւելի հաս-  
տատեցաւ, նուիրեցաւ, սրբազնացաւ։

Ո՞հ, երբ ճշմարտութեան դիմաց ճար-  
տասանք կանգնին դէմադէմ, ինչ են  
ասոր քով կիկերոնն ճոռոմաբան և թո-  
թով թութակն դիմութենէս, գոնէ ի-  
րենց մեզի համար անտարբեր խնդիր-  
ներովն։ Ճշմարիտ իմաստահրէ մը, (որ  
միայն քրիստոնեայն կրնայ ըլլալ) չի  
կրնար անոնց քով գտնել այն ստոյգ  
մոտաց և սրտի ճարակը, զոր առատ և  
անսպառ բղխէ բերանն ոսկի. ոչ միայն  
ճարտասանից վեհագոյն ճանչցուած, այլ  
և աշխարհաքարող գերագոյն քերդո-  
ղին հետ նմանակցելով մը համարուած  
Հովեր քեմական<sup>1</sup>. զոր և ես, Հայկակ,  
սիրեցի քեզ կոչել՝ Եկեղեցոյ խօսնեակ,  
ըստ ամենայն նշանակութեան բառիս։  
Բայց ոչ ես, և ոչ քաջ և արդար քըն-  
նաբանք այսպէս ըսելով ընդ հասարա-  
կաց, կ'ուզեմք նուաստացնել զարժէս և  
զառաւելութիւնս Եկեղեցոյ ուրիշ սըր-

<sup>1</sup> Միթէ պական բնական, փափուկ և ազդուէ  
քան զշոմերական խօսակցութիւն Հեկաբէայ ընդ  
Հեկատորի, Ռսկիբերանին դրածն իր մօր բերնէն,  
որ յորդորէր զնաքն չթողուլ չերթալ յանապատա-  
ճկնաւորաց՝ քանի որ ինքն ողջ էր և կարօտ որ-  
դւոյն ինամոց և սիրոյն։

բազան և գերագոյն պերճախօսից և հան-  
ճարեղ բեմականաց . Գրիգորեանց և  
բարսեղեանց, Ամբրոսեանց և Օգոստի-  
նեանց . որք նրաութեամբ և խորու-  
թեամբ իմաստից, ծաղկեալ պերճա-  
խօսութեամբ, գրեթէ և բանաստեղծա-  
կան նկարագրութեամբք, յաղթական  
տրամաբանութեամբ և բարձր աստուա-  
ծատեսութեամբ, ոչ ինչ նուազ հիա-  
նակի և ախորդելի են, և բազում մա-  
սամբք առաւելեալ իսկ քան զմեր խօս-  
նակս, նա և շատ տեղ աննմանք։ Ի  
վերայ այսր ամենայնի՝ գարճեալ հասա-  
րակաց առջև՝ մերս միայն կու մնայ Ու-  
կիբերան, քան զամենն աւելի պա-  
տուեալ և սիրելի, վկայեալ՝ ՚ի հայրե-  
նակցացն, յօտարաց և ՚ի մերոց նախ-  
նեաց՝ « Աստուածաշարժ հայր և ուսու-  
ցիչ հանուրց » : — « Աստուածակազմ՝  
լեզու, աղբիւր Եկեղեցոյ և արեգակն  
բանին, տիեզերաց վարդապետ Յով-  
հաննէս » : — « Անապական բանին  
» քարոզ Բերան – ոսկի . յորմէ աղ-  
» բիւր կենաց հոսեալ արբուցանելով  
» քառավլտակ բղխմամբ զբնդհանուր  
» տիեզերս » : Հազիւ քանի մը տարի  
յետ անոր մահուանն, յաջորդն և նա-  
խանձորդ Ատտիկոս հայրապետ գրէր  
առ մերս Սահակ Պարմէն . « Աղբիւրն  
» Եկեղեցոյ հայր մեր Ս. Յովհաննէս,  
» որ ոչ միայն տիեզերական մայրաքա-  
» ղաքիս (Կ.Պօլսի), այլ սովու և ամեր-  
» նայն քրիստոնեայք և ընդհանուր աշ-  
» խարհ ՚ի նմանէ վարդապետեալ ու-  
» սանի . ուստի և Ռսկիբերան կոչեցին  
» զնա » : — Անհատնում կ'ըլլար եթէ  
ուզէի ամեն այսպիսի մեծագոլութիւն-  
ներն յիշել։

Արդ ինչ է կամ ուսկից մեր խօսնա-  
կին գերազանցութիւնն . ուսկից անոր  
ոսկի լեզուին թափուածն, ինչ է ա-  
նոր կախարդիչ կամ աշխարհակալ ճար-  
տարիսօսութիւնն, ինչէն այն իրեն ըն-  
ծայեալ և արժանացեալ Եղականու-  
թիւնն : — ինձ կ'երեսի, թէ նախ՝ իր  
բնական, հզօր, վարպետ՝ միանդամայն  
և անարուեստ ճարտասանութիւնն, ինչ-  
պէս կու պահանջեն ընութիւն և հոե-

տորութիւն . զարմանալի զօրութիւն և անլուծանելի պարզութիւն միաձոյլ , որով գերազանցէ սա քան զամեն վերոյիշեալ պանչելի պերճախօս Հարս և վարդապետս եկեղեցւոյ . և եթէ ներեն ինձի քաջ քննաբանք՝ որք ըսին թէ կիկերոնի զրուցածին վրայ բառ մը կարելի չէ աւելցընել , և ոչ Դիմութենէն բառ մը վերցընել , առանց աւրելու անոնց զարմանալի բանահիւսութիւնը . կարծեմ թէ իմ խօսնակա այս երկուքին միջոց ճամփայ մը գտեր է , անանկ բանահիւսութիւն մը մաներ , որ արժանի է թէ չերմիսի և թէ Քրիստոսի : Վասն որոյ և իրաւամբք ասոր վրայ քան ուրիշ՝ կու զմայէր և կու հառաչէր Լիքանիսո՞իր ժամանակին մեծագոյն հոետորն , բարեկամն և վարժապետ Բարսեղեանց և Գրիգորեանց , և յետոյ՝ սոյն մեր խօսնակին վարժապետ , և կ'ըսէր թէ իր աթոռին միայն արժանաւոր յաջորդ վարդապետ կու ճանչնար և փափագէր զԱնտիռքացին Յովիչան , (որ գեռ 18 տարուան էր երբ թողուց այդ հոետոր վարպետը ) , եթէ քրիստոնեայք յափշտակած չըլլային զնա : Ի զնւր նախանձիս և ողբաս հեթանոս սովեստէս . Յովիչան աշակերտոդ , կը ծաղրէ զքեզ քու Ուրացող Յուլիանու կամ Անտիռքայ Դափնոյն վրայ գրած ու քերած ճառատանացդ վրայ , (իր Ա . Բաբելայ և Անտիռքայ շարժման վրայ գրած ճառից մէջ ,) և առանց հակառակութեան՝ քու աթոռէդ այլ քեզմէ այլ վեր բարձրացաւ և նստաւ : Ահա կու լսես (և երանի թէ լաւ լսէիր ) , որ ոչ միայն յԱնտիռք և յԱթէնս և ՚ի Բիւզանդիոն հրոշակի , այլ և յանկիւնս աշխարհի , առաւել քան զայլ արժանաւոր ճարտասանս , իակ քան զքեզ՝ անհուն առաւել : Ափսոս որ բնութեան քեզի տուած մեծ տուրք մ'ալ , երկարակեցութիւնդ , ամենէն կարևոր պէտքի չըերիր , և չկարցար խոնարհիլ և ըլլալ աշակերտ քու աշակերտիդ , երբ նա յԱնտիռքա եկեղեցին քարոզէր և ձայնն զիիւզանդիոն զուարճացընէր , զաշխարհ զարմացընէր : « Ամենայն տուրք հոետորականք ,

» բնականութիւն , փափկութիւն և մեծութիւն , միաբանեալք յ՛Ակիբերան՝ ըրին զնա մեծագոյն ճարտասանից » նախկին եկեղեցւոյ , և պայծառագոյն » թարգման այն նշանաւոր ժամանակին : Մէկէն կ'ափշին միտք 'ի տեսանելն այս մարդուս անբաւ երկասիրութիւնքը , և անոր հանճարոյն եռանդը » ( կամ գարձուածքը ) . կ'ըսէ ժամանակիս ամենէն երևելի քննադատն զեղեցիկ դպրութեանց , վիլմէն :

Ուկիբերանի երկրորդ առաւելութիւն որ և առաջնոյն կցորդ , կու սեպեմ ոչ միայն լեզուով տիրանալն 'ի վերայ ունկնդրաց , այլ ինքն իր լեզուին կատարեալ տիրանալ և սանձելն . որ նշան է իր հարուստ և զօրաւոր մտաց , որով չիկարօտիր շատոց պէս՝ պերճախօսութիւն կարծուած բանից զարդեր և ձևեր փոխ առնուլ . իսկ եթէ իր լեզուն ալ զարդեր և ձևեր ունի՝ այնքան բնական և աներեսոյթ են զարդքն , որ տարբեր լեզու մը կ'երեխ ուրիշ շատ չարց լեզուին քով . ասոնց ճառից մէջ շատ և շուտ կրնանք գտնել բառեր և բաներ՝ առանց որոց ալ կրնար ըլլալ՝ կ'ըսենք , իսկ Ուկիբերանին մէջ՝ կարծեմ խիստ զժար է փնտուելն անգամ : Ուրեմն հզօր լեզուն , հզօր և հարուստ միտքն միաբանեալ՝ իրեն անհամեմատ առաւելութիւն կու տան . եթէ անոնց մէկուն համար ըսուեցաւ Ուկիբերան , մէկայլին համար կ'ախորժէի ըսել Արդամանդ միտք , նա և սիրտ . հաստատութիւն և պայծառութիւն սեփական շնորհք են Ուկիբերանի թէ խօսից թէ վարուց : իսկ մտաց հարստութիւն կ'իմանամ թէ ըստ ուժոյ տրամախոհութեան և թէ ըստ գիտութեան և հանճարոյ , որով երրորդ առաւելութիւն մը կու աստանայ : Ասոր այլ վկայեն իր անբաւ գրած կամ խօսած ճառեր և գըրքերն , որոց մնացեալ ապագիլքն անգամ բազմահատողք են քան զշատից 'ի Հարց , և որոց համար մեր եկեղեցական գրոց մէկն ( Քայսմաւուրքն ) կ'ըսէ , թէ « Մինչտանէին զսուրբն՝ յաքսորս , եղ ձեռն 'ի

» վերայ եկեղեցւոյն և ասաց . Ո՞ղջ մնա ,  
» սուրբ եկեղեցի . . . զի 'ի պարզեացն  
» զոր առի 'ի ջեառնէ՝ յաւելի 'ի գանձս  
» քո դիրս 800 , ճառս 12,000 . արդ մի  
» մոռանար զաշխատութիւնս իմ» : Ոչ  
հատորոց թիւն , այլ գրուածոց իմաստն ,  
ազնուութիւնն , պէսպէս օգուտն են  
ցանկալի և զարմանալի , որոց համար  
առաւ այն մեծամեծ կոչմունքն՝ զոր վե-  
րը յիշեցինք , և զոր բովանդակելով  
շատք միաբան կ'ըսեն , Աղրիւր եկեղե-  
ցոյ . վասն զի Ս . գրոց մեծագոյն և գոր-  
ծագոյն մասին վրայ՝ մեկնութիւն և  
խրատ դրած է թափանցիկ մոռք , տաքք  
սրտով և վարպետ դրչով , որք անդին  
գանձ սեպուին եկեղեցւոյ . և որոց մէ-  
կը միայն չէր ուզեր փոխել բարիղի  
պէս քաղքի մը հետ՝ միջին դարուց գե-  
րագոյն հանճարն և աստուածաբանն՝  
Ա . Թովմաս Ագուինացի<sup>1</sup> : Միշտ անհա-

1 Գուցէ ոչ պակաս զգացմամբ և եռանդեամբ  
կու գրէ մեր եկեղեցւոյ դիաստետաց ամենէն Հո-  
խափառն և թագաւորակերպն , Պետրոս Գետա-  
գարձ , Ուկեբերանի առ Աննանսն կամ Ան-  
մանսն հաւելց յիշատակարաննին մէջ , զոր իրեն  
համար օրինակել տուեր էր : « Ուսուցանէ զմել  
» մեծախորհուրդսայս և մետոփեանբերանս ոսկի»  
» առաւել քան թէ աման Հոգւոյն : . . . Ո՞յ յայն  
» քան 'ի վերջն իմաստասիրութիւնն եհաս . ՞  
» այնպիսի շնորհի արժանաւոր եղեւ երբէք . ՞  
» այնպէս զբերան մտայն երաց և ձգեաց զչո-  
» դին . զի որ զամենայն գիտէ և քննէ զիորս Ար-  
» տուծոյ՝ հոգուով Աստուծոյ հասու լինիցի : Յայ-  
» սոսիկ մեզ քարոզն Շմարտութեան , վարդա-  
» պէտն տիեզերաց , որ զբազում շրջանակս հին  
» և նոր կտակարանաց՝ մանրամասնաբար ծաս-  
» կեալ ջամբեցոյց իրեւ զիաթն տպայցելց « ի  
» Քրիստոս : . . . Զայտասիկ ընծայեմ Աստուծոյ՝  
» գոհութեան պատարագ , ընտանեգոյն ընծայ  
» քան զոսկի մաքուր և քան զքարինս պատուով  
» պայծառագոյն , քան զզոհս օրինայն ընտրա-  
» գոյն , քան զանդրանկացն պատուզ ընդունելի : . .  
» Զայս նուիրեմ՝ զոր մնայ ինձ , ընկեան թողի  
» որով միանգամ նոխանամ : Քանզի զայլովք  
» զամենեքումբք զանց արարի պատուիրանով և  
» հոգւով , և զբազմապատիւ զմարդարիստն փո-  
» խանակ ամենեցուն՝ որոց ունէին երբեմ՝ փո-  
» խանակեցի , և եղէ մեծաշահ վաճառական . և  
» զուարձանամ այսպիսք առաւել՝ քան որովք  
» բազմօք բերկրին : Եւ առնեմ զսա ամենայն  
» կենաց իմոց հաղորդ և խորհրդակից բարի և  
» խօսակից և առաջնորդ վերին ճանապարհին .  
» զի զամենայն զվայելքականս անպատուեմ՝ 'ի  
» սաորինս կալ մնալ : Յայս ինչ ամենայն նախեցաւ ու-  
» բելաւին վնի Աստուծոյ . արձան կանգնեացի յի-  
» շատակ հոգւոյ :

մեմատ պիտի մնայ մեր խօսնակն՝ այն  
լեզուաւն՝ որ աւելի հասկանալի է ժո-  
ղովրդեան՝ գործնական և բարոյական  
խօսքերով , քան տեսական և այլարա-  
նական . ինչպէս են շատ ուրիշ հարց ,  
որով և ոչ դիւրիմաց և օգտակար բազ-  
մութեան մարդկան : « Պարզ և յայտնի  
» բանիւ զիսորս աստուածային գրոց առ  
» հասարակ ամենեցուն ճառէր . — կ'ը-  
» սէ Պրոկլ . — իբր ոչ եթէ տղիտանայր  
» իմաստասիրել գտուարաբաց բառիւք ,  
» այլ ցանկայր զամենայն հոգիս լսո-  
» զացն օգտեցուցանել : . . . բարողեաց  
» զծածուկ միտս գրոց 'ի լոյս և 'ի հրա-  
» պարակս , զոր իբր յունկանէ և 'ի խա-  
» ւարէ՝ 'ի մաքուր միտսն ընկալաւ »<sup>1</sup> :

Չորրորդ պատճառ մ'այլ Ոսկիբերա-  
նի մեծ համբաւոյն՝ իրմէ վերջը իրեն  
նմանող մը չունենալին է , և զրեթէ վեր-  
ջին ըլլալն մեծամեծ չարց եկեղեցւոյ .  
յորոց միայն կիւրեղ մ'եղաւ առ Յոյնս  
( յԱղեքսանդրիա ) , և մեծն Օգոստինոս  
առ Լատինս , որը հմտութեամբ գերազաս են ,  
այլ ոչ և լեզուի կամ գրչի դասական  
ճարտարութեամբ : — Իսկ հինգերորդ  
և մեծագոյն պատճառ ( թողլով քննել  
զայլ ) մեծութեան Ոսկեբերանի՝ իր մա-  
քուր բարքն և զանազան հանճարն , ո-  
րովք նշանագոյն է և 'ի դպրութեան  
Սրբոց և 'ի քաղաքականութեան : Զի-  
կրնար իր վարքն ընթերցովն և գիտողն  
չզմայլիլ մեծապէս , նկատելով անոր  
հոգւոյն անմարելի կրակն՝ սէրն առ Աս-  
տուած , իր կուսական մաքրութիւնն ,  
խոր խոնարհութիւնն և բարձր յարգն  
աստուածային իրաց , որով չէր համար-  
ձակեր եկեղեցւոյ պաշտօնեաց իսկ ըլ-  
լալ , այլ անապատի մէջ տատրակաց  
հետ մնչել և իր ծիծեռնաձայն լեզուն  
ծածկել , և զրեթէ բռնի յանձն առաւ <sup>2</sup>

1 Ա . Յա բանս ռամիկ ոճով բացատէ մեր մէկ  
վկայագիրն . « Ամենսին բառակապիւ և քերակա-  
» նաւ ոչ գրեաց , վասն տգէտ և խառնիճազանձ  
» ժողովրդեանն . այլ զամենայն պարզ և յատակ  
» խօսեցաւ վասն հասկանալց ամենայն մարդ-  
» կան » :

2 Կ'աւանդեն իր վարուց գրողք ոմանք թէ այս  
բանիս հաւանեցաւ տեսիլք մը տեսնելով , յորում

37 տարուան (ըստ ոմանց 27 տարուան) սարկաւագ ըլլալ և իրը 40 ամեայ քահանայ, ու յետոյ նոյնպէս ակամայ և խաբուելով բերուիլ ու պատրիարք ըլլալ կ.Պօլսոյ:

Հոն իր զրեթէ հնգամեայ կարճ հայրապետութեան միջոց (398-404) ըլլած եկեղեցւոյ և ժողովրդեան օգտակար բարեկարգութիւնքն՝ եթէ խիստ շատ են ըստ ժամանակին քիչութեան, աւելի այլ մեծ են ազնուութեամին. կ'ափ շին միտք՝ թէ երբ'ի վերայ այնքան գըրուածոց և քարոզութեանց՝ ժամանակ կու գտնէր կարգաւորելու կանոնաւորելու իր գղերը, իր հեռաւոր թեմերն այլ այցելութեամբ քննելու, պայծառացնելու զեկեղեցի և զաստուածային պաշտամունս՝ ջերմեռանդն աղօթիւք, երգովք և ժամասացութեամբք, որոց շատն ոչ միայն մինչև ցարդ հասարակ են առ Եոյնս, այլ և մեր եկեղեցւոյ մէջ. — Բնչպէս այն տիեզերական մայրաքաղաքին զեղծումեղծ բարուցը հետ կրցաւ կուուիլ. — Բնչպէս անմատչելի թագաւորաց և թագուհեաց հետ անվախ համարձակ վարեցաւ իրեւ իր հօտին հասարակ ոչխարաց հետ. — և Բնչպէս յետ նազոյն ռամիկը, գուեհիկը, այրի կնիկը, և ըրածը ճանչցող խառնակեցիկն ու մեղաւորն անդամ կանգնէր, սիրէր, մեծարէր, իրեւ զիշխան և զարգայ. — համառօտ ըսեմ, Բնչպէս, նման իր շատ սիրած՝ իր զմայլած՝ իր բացատրած վարդապետին՝ Պօլսոս առաքելոյ, ընդ ամենայնի ամենայն լինելով, կրնար անոր պէս այլ ըսել՝ « Նմանողք ինձ եղերովք, որպէս և ես Քրիստոսի » : Ոչ ոք, մանաւանդ անանկ դժուար առթից մէջ,

Քրիստոս ձեռնադրէր զնա քահանայ, Տէրամայրն եմփորոնը կու տար. Քետրոս առաքեալ բանամբը, Յովհաննէս՝ զաւետարանը. այս է Կիւլիկեցի շարական երգչին ըսածն.

« Երեւմամբ սուրբ հրեշտակաց՝ ի Քրիստոսէ ձեռնադրէցար,  
Զպատմուհանըն փորանկեալառ՝ ի վերուստ՝  
հոգւով զգեցար:  
Ի վիմէն եկեղեցւոյ՝ զփականս երկնից հաւատացար.  
Սիրեցեալ յաշակերտէն՝ զաւետարանն առընկալեալ » :

ուր հարկ էր փառասէր, պշրող, նրբամիտ, ամենահնար Յոյն կայսրուհւոյ մը հետ (Եւգղիսեայ), մրցիլ՝ վասն իրաւանց Աստուծոյ և զրկելոց նորա, թոյլ թագաւորի մը (Արկադէոսի) քով խօսք քալցընել, Աղեքսանդրիոյ մեծ և զինքն խակ ձեռնադրող հայրապետին (Թէոփիլոսի) հակառակիլ արդարութեան և մարդասիրութեան վրայօք, գիտնոց և տղիտաց միջնորդ ըլլալ, դէմադէմ խոռվեալները խաղաղընել, բարեկամները չվհատեցնել, թշնամիները չվստահացնել, ամենուն չափը զանազանել, զամենքն անզանազան սիրել, ըստ պատշաճին տեղը կենալ կամ տեղի տալ, ոչ փառասիրութեամբ գահին փակչիլ, և ոչ նուաստութեամբ աթոռէն իջնել. ոչ այն ամենսկին անարժան և անհիմն զրպարտութիւններէն նեղուիլ, և ոչ այն աշխարհահոչակ գովեստներէն և Ռոկերերան կանչուելէն՝ լայնիլ. (ինչպէս ինքնին կ'ըսէր անգամ մը յամպիոնէն. « Երեկ զիս երեքտասաններորդ առաքեալ և այսօր Յուղաս յառաջ ընթացաւ » .) — ոչ ոք կ'ըսեմ, ասանկ և այլ աւելի բազմակնճիռն առթից և հակառակութեանց մէջ գտուեցաւ, և ոչ այլ այնքան իմաստութեամբ և արիութեամբ, միանգամայն սիրով և համբերութեամբ վարուեցաւ անայլայլակ, անշփոթ, անտիտուր և անտարակոյս։ Գեղեցիկ ուրեմն գովութեամբ մեր դանձասացն կ'երգէ՝ ի պատիւ նորա.

« Խնկոս է բազմաց շաւել քոց վարուց .

« Նուրբ և բարձրագոյն քան զելս աղաւնւոյ » : Այսպիսի բարեկարգութիւններն յիշելով իրեն հոգեկիր մերազգի հայրապետ մ'այլ, Ա. Ներսէս Լամբրոնացի, կու կանչէ. « Ո՛վ երանելի և քաղցր աստուածազգեացն հոգւոյ, այսպիսի վայ» Ելէր մեզ քահանայապետ՝ չարչարա» կից, զզածեալ տկարութեամբ ժողովրդեանս : — « Ոչ ոք լաւագոյն քան զնա կրցաւ, կ'ըսէ, վերոյիշեալ փուանկ » քննաբանն, կատարել զպաշտօնն բանին՝ զոր աւետարանն մնուց : Հին աշխարհին վրայ պատուաստած նոր » ընկերութեան՝ գեղեցկագոյն հան-

» ճարն է Սա. Սա է գերազոյն քրիս-  
տոնէացեալ Յոյնն » :

Բայց ով գժրաղզութիւն և զրկումն  
հասարակաց, ով ամօթ զըկողաց . այս-  
պիսի անձն այլ ունեցաւ թշնամի և  
հակառակորդ : Անաշառապէս յանդի-  
մանուած դշխոյն Եւդոքսիա, իր ձեռ-  
նադրելոյն մեծութեան չքաշող հայրա-  
պեան Աղեքսանոդրիոյ, քանի մը կաշա-  
ռակուրծ կամ նախանձաբեկ եկեղեցա-  
կանք, քանի մը կշտամբեալ իշխանք,  
և տկարամիտ կամ անմիտ բարիա-  
տեագք՝ միաբանեակք, շուքի պէս ըն-  
կան Յովհաննու փայլուն կերպարանաց  
ներքե, այնչափ աւելի անոր պայծա-  
ռութիւնը՝ որչափ իրենց սեռութիւնը  
նշաւակելով. և որ աւելի ցաւալին է,  
ոչ միայն մարդու հետ կոռուելով այլ և  
աստուածամարտ ըլլալով : Վասն զի շա-  
տոնց ծանր եկած էր լսելն՝ ոչ միայն  
զ՛Ակերերան անունն և զհամբաւ իմաս-  
տութեան նորա, այլ և անոր անխար-  
դախ, մաքուր և գրանչելի վարքը, սրբ-  
բութիւնը, հրաշագործութիւնը. և թե-  
րևս այս եսքինիս նկատմամբ իր կուսա-  
կիցքն և սիրելիք չափազանց գտուեցան,  
այլ գոնէ այնպիսի անձի մը վրայ կըր-  
նար չափազանցութիւնն արդարանալ.  
գուցէ գուցէ կապուտակ նախանձն  
այլ, եթէ կարելի էր յայտնի երևելու,  
չէր կրնար աւելի նախանձելի մէկ մը  
գտնել քան զ՛Ակերերան . զոր բարե-  
սէրքն՝ ի կենդանութեանն գերազոյն  
հոչակեցին իր ժամանակակցաց, յետ  
մահուն բարձրացեալ՝ ի դասս սրբոց և  
անմիջապէս Աստուածապետականին ա-  
թոռոյ քով, ըստ յայտնութեան կամ  
տեսլեան մը . զոր տեսան, կ'ըսեն, ար-  
ժանաւոր անձինք. և այս աւանդու-  
թիւնս է՝ զոր մեր եկեղեցւոյ քաջ եր-  
գիչն այլ՝ ի պատիւ նորա սրբացընէ, ը-  
սելով. « Որ յանձառելին մերձեալ՝ ի  
» ըստ՝ հուպ Երրորդութեանն, ով երա-  
» նելի տէր վարդապետ » : Մէր և մե-  
ծարանք իրենց աննման հովուին և վար-  
դապետին վրայ՝ եթէ քիչ շատ մեծա-  
բանել տուաւ յունական դիւրաշարժ  
սրամեռու, աւելի շատ ապաշնորհ և ան-

գութ գտուեցաւ հելենական յաչա-  
զանքն և ատելութիւնն, 'ի նախատինս  
այնպիսի պանծացեալ ազգի և ժողո-  
վըրդեան, որ զ՛Ակերերան և զԱստուա-  
ծաբան իր մայրաքաղաքի բարձր աթո-  
ռէն հեռացուց յօտարութիւն, յաքսոր  
և մինչև 'ի մահ : . . . Զասոնք յիշելու ա-  
տեն՝ կրնամիք մոռնալ, Հայկակ, մեր նա-  
խատինքն այլ, մեր հարց ըրածներն առ  
Սահակ և Ներսէս և նմանիսն : . . . Սա-  
կայն, քան լիցի, ես ոչ զհայս մեղա-  
դրեմ և ոչ զթոյնս, ոչ զընդհանուր ազգն  
և ոչ զժողովուրդն, այլ թէ շատ՝ իրենց  
պնզագլուխ զիսաւորները, արքունեաց  
և աթոռոց հնարքները և կուսակցու-  
թիւնները, և մեծամեծաց քով աւելի  
մեծցած նախանձը և զիրցած կրքերը .  
որոց ըրած չարիքն շատ հեղ ռամկին  
վրայ կ'ընկնի, և բոլոր ազգին անուամբ  
յիշուի . « Հարք կերան վազոխն և որդ-  
» ւոց ատամունքն առան » : Բայց ար-  
դարութիւն գիտէ և կրնայ ընտրել զաջ  
ու ձախ . պատմութիւնն անդամ շատ  
հեղ վկայ է ստուգութեան : . . .

Առջի անգամ Ասկերերանի դէմմիա-  
րաններոց հնարքն, վճիռն, հրամանն,  
պատուհան և աքսորն, հայրասէր և  
հաւատարիմ ժողովրդեան սիրոյն դէմ,  
և կարկտախառն երկնից արհաւրաց  
դէմ՝ խիստ քիչ զիմացաւ . արեգական  
պէս հազիւթէ ծածկուելով յախոռէն,  
և ահա առաջինէն պայծառ ծագեցաւ  
բարձրացաւ իր տեղը . մեծ ու պզտի  
թշնամիք՝ շուրի և միզի նման հալածե-  
ցան կորան . դժնղակ դշխոյն անգամ  
սարսափելով՝ ներումն և անմեղագլու-  
թիւն խնդրեց, թէ և այլ աւելի նա-  
խանձելով, երբ իր պալատան ծովա-  
հայեաց պատշգամէն կու զիտէր և չէր  
տեսներ ծովուն երեսը . ուր ոչ այնքան  
մեծազօր երևցեր էր Քսերքսէս՝ նաւե-  
րով կամրջելով և յատակելով զիսորան  
դունդ նեղուցը, և ոչ մերս Աբտաշէս որ  
« յելեսապոնտոս և 'ի թրակէ՝ զտարե-  
» բացն փոխեաց զբնութիւն . . . ընդ  
» ծով հետևակելով », որչափ մեծա-  
գործ և մեծասիրտ կ'երևէր այն յունա-  
կան ռամիկ ժողովուրդն, տկար նաւակ-

ներով ծածկելով բովանդակ նաւահանց զըստին ծփած աւազանը՝ յընդառաջելն և 'ի դարձնել յաթոռն իր Ոսկեբերանը<sup>1</sup>: Երջանիկ ժողովուրդ, այլ երանի թէ միշտ կամ աւելի երկար ատեն: — Եւ ոչ կէս տարի քշեց մեր խօսնակին հաստատուիլն 'ի բեմն իւր. ամօթապարտ թշնամիք կամ յաշաղկոտք՝ աւելի թանձրացած կրքերով՝ միստ ծխոտ ամպերու պէս խոտացան մօտեցան իրարու կպան. դարձեալ ժողովեցան 'ի թրակիա՝ այլ աւելի ընդդիմակաց բազմութեամբ և զօրութեամբ, մինչև Եպիփանու պէս պարզամիտ սուրբերն անգամ՝ խարխրբելով և իրենց կրողը ձգելով. որոնց մէջ՝ սիրտ առած, յօնքերը կամարած, ոտքով ու զիսով թեթևն Եւդրսիա՝ իրը նոր « Հերովդիաղա՝ դարձեալ կաքա» ւէր, դարձեալ խնդրէր զգլուխն Յովլ « ՀաննուՄկրտչի», արդարեւ իսկ մկրտչի և կնքահօր իր թագաժառանգ որդոյն թէոդոսի ֆոքու: . . . կրնար Յովհաննէս իր անիրաւ բռնաւորաց դէմ իրաւացի բռնութիւն բանեցընել, գոնէ իր սիրելի որդուց՝ ժողովրդեան՝ զութն և աղայանքը զէն ու վահան առնուլ. սակայն իր մեծ սրտին, և մանաւանդ աստուածաշարժ հոգեցն և հեզութեանն թիսուսի՝ անարժան սեպեց զայն: . . .

Իր վարուց (և ընդհանուր պատմութեան մէջ) մեծապէս սրտաշարժ զիստածներէն մէկն է Ոսկեբերանի յետին հրաժարական ողջոյնն առ ուխտ եկեղեցոյ իւրոյ. որ և ակամայ իմն հոս կույիշեցընէ ինծի մեր դարուն մեծադոյն քաջին մեծահոչակ հրաժեշտն<sup>2</sup>. այլ քանի այլակերպ, նուաստ և խիթալի: — Նա՛ բոլոր եւրոպական ազանց ճապաղեզք ճենձերեալ և դեռ արիւնակաթ դրօշը և դրօշակիրը՝ համբուրէր ցաւելով, որ այլ չպիտի կարնայ թուցընել զայն կայսերական արծւոյն թւեզք՝ նորանոր մարդածախ դաշտերու մէջ, և իրեն անձնանուէր գնդերով՝ աւելի բազմաթիւ մարդ.

1 Ա. Ա. Եղաւ 'ի 403 յ' 13 նոյեմբ. անոր համար Յոյնք այսօրս այլ կու տօնեն զըսկեբերան, և ոչ վախճանած օրն՝ սեպտ. 14, որ Ս. Խաչի տօն է:

2 Ի Ֆոնդէնըպլս:

կութեան գնդերը՝ որբ այրի, նաև դիակն դարձնել. — իսկ մեր խօսնակն եկեղեցւոյ՝ որ աւետարանին փողով դղրդէր զտիեզերս և 'ի հոգեւոր զինուորութիւն Քրիստոսի գումարէր զծեր և զտղայ, զերիտասարդ և զկուսան. հիմայ իր չորս զին տեսնելով մեծամեծ դաւառաց և քաղաքաց այցելու գնդապեսներ, 40իւ չափ եալիսկոպոսներ, որք տղու պէս լային իր քով և աղաչէին չհեռանալ իրենցմէ, ինքն վսեմագոյն և աստուածային կամաւ տարագիր՝ մէկ մէկ զըրկելով այն սրբազան ժողովրդապետները, որոց ձեռօք Աստուծոյ թագաւորութեան սահմանները կ'ընդարձակէր յերկրի, հայրապետական սուրբ համբուրով, և ոչ առանց արտասուաց, օծէր ճակատնին, կնքէր և զօրացընէր 'ի վշտակցութիւն 'ի նահատակութիւն վասն երկնաւոր յաղթանակին: Ամեն եալիսկոպոս՝ որ գրկէն կ'ելնէր, բան մը փրցընէր 'ի սըրտէն. որ և չկրցաւ մինչև ցվերջ զիմանալ, և ոչ զամենքն ողջագուրել. հայր էր սիրուն, զօրացաւ զայրացաւ գթալիր սիրաբն... թողուց սուրբ գունդը, հեռացաւ պահ մը 'ի սարկաւագանոցն ծածկուելու... Եւ ահա հոս այլ աւելի սրտաճըմլիկ տեսարան մը և կակուղ խումբ մը պաշարեց զնա. երանելի սարկաւագունին Ոլիմպիադա՝ ընկերակցօք նմանեզք՝ հեծեծանզք վազեցին յուտքը պլլըւեցան. Մարթայի պէս կ'աղերաէին, Մարտիամու պէս լային, կուսանաց պէս մարմըրէին. ողկուզազարդ ուռոց պէս փակած իրենց երկնաղիտակ որթոյն վրայ՝ չէին ուզեր բաժնուկլ... կուսից և եպիսկոպոսաց արտասուփն յիրար խառնուեցան. եկեղեցւոյն մէջ բոլոր ժողովուրդն հառաջէր, սուրբ սեղաններն անգամ սարսէին. աստուածային առագաստն ինքնին կ'ողբայր իր այրիանալն 'ի զգաստ փեսայէն. ըսեմ, թէ « և արտասուեաց Յիսուս »: . . . խակ Յովհաննէս՝ լսելով տեսնելով զասոնք, եթէ կրնար գերազանցել քան զմարդ, այլ ոչ և զաստուածամարդն. հատուց ինքն ալ բնութեան անմեղ գթոյ պարտքը. բայց և շուտով տիրանալով վրան՝ քա-

շեց աղամանդիկ սիրտն յոսկի բերանն . լըեցուց (թէ և լացուց) զինքն յորդորող, պաշտող ու պաշտպանող եպիսկոպոսները, գղերը, սարկաւագուհիները ու բանին տեղեակ եղողքը : Իր լեզուին ճարտարութիւնն և ոյժը՝ շատ անգամ փորձեր էին, բայց սրտին այսքան պնդութեան և մեծութեան դեռ անփորձ էին . ափշեցան, ափիբերան եղան, յաղթուեցան, անգամ մ' այլ դաս առին իրենց աննման վարպետէն, որ մատոմն կու ցուցընէր զերկրիս բուրը, թէ « Տեառն է երկիր լրիւ իւ » բովլ » . արդարն ուր ալ որ ըլլայ, միշտ նոյն է, կամ միշտ պանդուխտ կամ ոչ երբէք . և բերնովն կրկնէր իր պանծալի պարոյը, « Փառք քեղ Աստուած, յա » զագս ամենայնի » : Եւ ըստ սրտին՝ անայլայլակ և զուարիթ դիմք իջնելով յաթուոյն, յայն աթուոյն՝ որ ոչ յառաջ և ոչ ետքը իրեն հաւասար բազմական ունեցաւ, զատուեցաւ ՚ի սիրելեացն : — Իսկ ՚ի թշնամեացն . — իր աստուածային օրինակին նման՝ նկատելով զանոնք՝ ողք գահավէժ ընել կ'ողէին զինքն, « և նա անցեալ ընդ մէջ » նոցա գնայր » :

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱՆ

Կը շարունակուի :

### Դժուարին վիրաբուժութիւն մը .

Քանի մ'ամիս կայ որ Պրուքսելի կենդանաբանական ընկերութեան Ատլասի գեղեցիկ առիւծն ծանր հիւանդութենէ մը բռնուեր էր . ախտն շատ զայրանալով, անհրաժեշտ հարկ համարեր էին ճիրանը կտրելը . Պ. թիեռնէս այն ընկերութեան անասնաբոյժն իր վրայ առաւ այս դժուար գործողութիւնը, որու համար մասնաւոր կազմած մ'ալ շինել տուաւ . որ էր կաղնիէ՝ հաստ երկթէ շրջանակներով նեղ մնտուկ մը, այնպէս որ կենդանին չիկրնայ մէջը դառնալ : Մնտուկին երկու կողմերը մնտնալու ելլալու բացուող վանդակներ

կային . յատակն շարժուն, ու վանդակագործով մը ծածկած էր, զոր թէ դուրս քաշէին, կենդանւոյն թաթերն ծակերէն դուրս կ'ելլէր, ան ժամանակ մնտուկին շարժուն ձեղունն երկաթէ ուժով պտուտակով մը ցածնալով պիտի սեղմէր զիւանդը՝ որ անշարժ կենայ և չիկրնայ իրեն քաշել մնտուկէն դուրս ելած թաթերը :

Թէպէտ այս կազմածն առաջուց առիւծին գառագղին մէջ դրուած էր, բայց նա քանի մ'օր անօթութիւն քաշելէն վերջը յանձն առաւ անոր մէջ մնտնալը : Պ. թիեռնէսի իմաց տրուելով եկաւ՝ անասնաբուժութեան դպրոցին աշակերտներէն հինգ հոգի հետը առած : Վերջը սկսան ձեղունը իջեցնել, և շարժուն տախտակը քաշեցին . երբ կենդանւոյն թաթերն մնտուկէն դուրս ընկան, մնտուկը մէկ կողման վրայ դարձուցին . և վիրաբոյժն ետեսի թաթերէն մէկը ուժով մը բռնել տալով՝ սկսաւ կտրել ըղունդը . թէպէտ առիւծն անհամբերութեան շարժմունքը պակաս չըրաւ, բայց որչափ որ կատաղութեան վախ կար այնչափ չեղաւ . և հետզհետէ միւս թաթերուն վրայ ալ կատարուեցաւ գործողութիւնը, վասն զի չորսն ալ չարաչար վիրաւորուեր էին : Բազմաթիւ ժողովուրդ ներկայ էր այս տեսարանին որ շատ սրտաշարժ էր . կը մնչէր առիւծն երբեմն երբեմն՝ բոլորովին անսովոր, յանկարծական և ահեղ կերպով մը՝ որ թնդանօթի որոտման կը նմանէր : Երբ առջի թաթին գործողութիւնն լրմնցաւ, կարծես թէ իմացաւ որ խնամք կը տանին ցաւերուն . իր հոգացող պահապանն ալ, զոր շատ կը սիրէր, և զլսուն դին կեցած հանդարտեցնելու համար հետը կը խօսէր, իրաւցնէ ալ ազգեցութիւն կ'ընէր իր սոսկալի հիւանդին վրայ : Վերջապէս աղէկ յաջողեցաւ այս դժուարին բժըշկութիւնն :